Կարգապահական գործ թիվ ԿԳ-25087

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄ ՌՈՒԴՈԼՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արամ Հովհաննիսյանի, դիմողի ներկայացուցիչ Վահրամ Մարգարյանի,

քննության առնելով փաստաբան Արամ Ռուդոլֆի Հովհաննիսյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 564) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատին է դիմել ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետ Խաչիկ Հարությունյանը **(այսուհետև նաև՝ Դիմող)**:

Ըստ Դիմողի՝ փաստաբան Արամ Հովհաննիսյանը, հանդիսանալով ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձ Կարեն Մարգարյանի շահերի պաշտպանը, սույն թվականի սեպտեմբերի 18-ին իր պաշտպանյալին տեսակցելու նպատակով այցելել է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ: Հիմնարկի հսկիչ անցագրային կետում վերջինս

Թիվ ԿԳ-25087-2-Ա
25.02.2026թ.

նախազգուշացվել է արգելված իրեր ունենալու վերաբերյալ, որի արդյունքում վերջինս հանձնել է իր մոտ առկա անձնական օգտագործման 2 հատ բջջային հեռախոսները, որից հետո Փաստաբանը համապատասխան մատյանում ստորագրել է, որ իր մոտ արգելված իրեր առկա չեն: Այնուհետև, հիմնարկի հսկիչ անցագրային կետում, կասկածի արդյունքում վերջինիս աշխատանքային պայուսակը ենթարկվել է զննության և պայուսակում հայտնաբերվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված արգելված իրեր՝ կպչուն ժապավենով փաթեթավորված և քողարկված երկու հատ բջջային հեռախոս իրենց բաժանորդային քարտերով:

Դիմողը հավելել է, որ նույն օրը Փաստաբանի նկատմամբ իրականացվել է վարչական վարույթ և որոշում է կայացվել 200.000 ՀՀ դրամ վարչական տույժ նշանակելու մասին:

Վարչական վարույթի ընթացքում Փաստաբանն իր բացատրությամբ ընդունել է զանցանքը և հայտնել, որ գիտակցում է, որ արգելված առարկաներ է ներկրել քրեակատարողական հիմնարկ:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել Փաստաբանին:

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Դիմողին առաջարկվել է ներկայացնել բացատրություն:

Ի պատասխան բացատրության պահանջին՝ ներկայացվել են վարչական վարույթի նյութերը:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 09.06.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արամ Հովհաննիսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Կարգապահական վարույթ հարուցելու որոշումը ստանալուց հետո՝ 10.11.2025թ. Արամ Հովհաննիսյանը ՀՀ փաստաբանների պալատ է ներկայացրել «Պարզաբանումներ» վերնագրով փաստաթուղթ:

Փաստաբանը նշել է, որ իրականում իր պայուսակը խուզարկել են, ոչ թե զննել, ուստի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը հիմնազուրկ է և ենթակա է վերացման: Նշել է, որ հեռախոսները մինչ օրս գտնվում են ՔԿՀ-ում, ինչը անօրինական

է:

Արամ Հովհաննիսյանը գտել է, որ ինքն առանց որևէ հիմքի ենթարկվել է անձնական խուզարկության: Իսկ նշված բջջային հեռախոսը մեկ այլ գործով իրեղեն ապացույց է:

Նշել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն անհիմն է և աղավաղված:

Բացատրությանը կից Փաստաբանը ներկայացրել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և որոշումը:

Պալատը 26.11.2025թ. Փաստաբանին հասցեագրել է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին ի պատասխան՝ նա 01.12.2025թ. ներկայացրել է նույնաբովանդակ պարզաբանումներ՝ խնդրելով ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի պետի դիմումը ճանաչել հիմնազուրկ և հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 24.10.2025թ. թիվ 308-Ա/ԿԳ-25087 որոշմամբ փաստաբան Ռուդոլֆի Հովհաննիսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի,** ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 6.2.1 ենթակետի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

31.10.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Շուշան Հարությունյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.12.2025թ. կազմել է եզրակացություն:

26.12.2025թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերով:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 04.02.2026թ. ժամը 18:30-ին, 25.02.2026թ. ժամը 19:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը 18.09.2025թ. մուտք է գործել ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ՝ տեսակցելու այնտեղ պահվող իր պաշտպանյալին: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններով:*

2. ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի անցագրային կետում փաստաբան Արամ Հովհաննիսյանը տեղեկացվել է արգելված իրեր/առարկաներ ներս չտանելու մասին, որից հետո վերջինս հանձնել է իր հեռախոսները, բանալին և 10 ՀՀ դրամը, և ստորագրել է մատյանում, որ այլ արգելված առարկաներ իր մոտ չունի, որից հետո զննության արդյունքում իր թղթապանակից հայտնաբերվել են կպչուն ժապավենով թղթի մեջ թաքցրած թվով 2 բջջային հեռախոսները: *Սույն փաստը հաստատվում է կազմված արձանագրությամբ, որի դեմ որևէ անհամաձայնություն չի հայտնել Արամ Հովհաննիսյանը:*

3. Փաստաբանը հսկիչ անցագրային կետում ենթարկվել է զննության, որի արդյունքում պայուսակի մեջ առկա թղթապանակից հայտնաբերվել են թվով երկու բջջային հեռախոսներ՝ բաժանորդային քարտերով: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի կողմից ներկայացված՝ վարչական տույժ նշանակելու թիվ 01/25 որոշմամբ:*

4. Փաստաբանը բացատրությամբ հայտնել է, որ բջջային հեռախոսներն այլ հանգամանքներով պայմանավորված մոռացել է իր մոտ, սակայն գիտակցում է, որ արգելված իր է ներկրել քրեակատարողական հիմնարկ և պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության: *Սույն փաստը հաստատվում է ՔԿՀ-ի կողմից ներկայացված՝ բացատրություն վերցնելու մասին արձանագրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Արամ Հովհաննիսյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում փաստաբանն ունեցել է 1 կարգապահական տույժ (տույժը մարված է):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, **Կանոնագրքի 6.2.1 ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 6.2.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում, ինչպես նաև ուղղիչ հիմնարկներում՝ 1) պահպանել սահմանված կարգը:*

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում կանոնակարգերի կատարումն ապահովելու նպատակով սահմանվում են ներքին կանոնակարգեր, որոնք կարգավորում են ձերբակալված և կալանավորված անձանց ընդունելու կարգը, նրանց վարքագծի կանոնները, այն առարկաների և իրերի ցանկը, որոնք ձերբակալված և կալանավորված անձինք չեն կարող ունենալ իրենց մոտ, արգելված առարկաներն առգրավելու, սպրուգումներ կատարելու, տեսակցությունների, նամակագրության, ծանրոցները, հանձնուքները և փաթեթները նրանց հանձնելու կարգը, օրվա կարգացուցակը և նույն օրենքից բխող այլ հարաբերություններ:*

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 543-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի (այսուհետև նաև՝ Ներքին կանոնակարգ) 122-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ *կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելվում է իրենց մոտ ունենալ կամ հանձնուքներով և ծանրոցներով ստանալ կամ ձեռք բերել, ինչպես նաև արգելվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին վաճառել ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, բջջային հեռախոսի լիցքավորման սարք, բաժանորդային քարտ և այլ մասեր ու պարագաներ, ռացիա և այլն):*

Ներքին կանոնակարգի 252-րդ կետի համաձայն՝ *խուզարկությունը պետք է անցկացվի այնպիսի պայմաններում, որոնք չեն նվաստացնում անձի պատիվն ու արժանապատվությունը: Խուզարկությունից առաջ անձին առաջարկվում է ներկայացնել իր մոտ առկա առարկաները, իրերն ու սննդամթերքը, իսկ արգելված առարկաների, իրերի կամ սննդամթերքի առկայության դեպքում՝ դրանք ինքնակամ հանձնել:*

Ներքին կանոնակարգի 262-րդ կետի համաձայն՝ *քրեակատարողական հիմնարկի*

փարածք մուտք գործող ու այդ փարածքից ելք ունեցող անձի իրերի զննումից առաջ անձին ներկայացվում է արգելված առարկաների, իրերի և սննդամթերքի ցանկը և առաջարկվում՝ դրանց առկայության դեպքում ինքնակամ հանձնել: Զննման ընթացքում առաջարկվում է ցույց տալ պայուսակի, ճամպրուկի, հանձնուքի, ծանրոցի կամ այլ պահոցի պարունակությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զննման համար տրամադրել նաև հագուստը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի, փաստաբանի համար նաև սահմանվում են որոշակի պարտականություններ այդ թվում պետական այլ մարմինների հետ փոխհարաբերություններում, որտեղ փաստաբանն իրականացնում է իր գործունեությունը:

Ավելին, նշված պարտականությունների շրջանակներում առանձնակի նշանակություն ունեն հենց ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում Փաստաբանի վարքագիծը կարգավորող կանոնները, որոնք իրենց էությամբ բլանկետային են՝ հղում են կատարում այլ իրավական ակտերին, որոնք կարգավորում են այդպիսի հիմնարկներում ծավալվող իրավահարաբերությունները:

Այս համատեքստում, փաստաբանը գործելով ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պետք է պահպանի սահմանված կարգը: Իր հերթին ձերբակալվածներին պահելու, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դրույթների բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ փաստաբանը՝ Կանոնագրքի 6.2.1 ենթակետով սահմանված պարտավորության տրամաբանության ներքո, պետք է պահպաներ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և Ներքին կանոնակարգով սահմանված կանոնները:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը, ուսումնասիրելով և գնահատելով Դիմողի կողմից ներկայացրած ապացույցները, հաստատված է համարում այն փաստը, որ 18.09.2025թ. փաստաբան Արամ Հովհաննիսյանը մուտք է գործել ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ իր պաշտպանյալին տեսակցելու նպատակով: Անցագրային կետում վերջինս տեղեկացվել է քրեակատարողական հիմնարկ արգելված իրեր չներմուծելու պահանջի մասին և մատյանում ստորագրությամբ հաստատել է, որ իր մոտ այլ արգելված առարկաներ առկա չեն: Միաժամանակ փաստաբանը հանձնել է իր

մոտ եղած հեռախոսները և այլ իրեր: Սակայն հետագայում իրականացված զննության ընթացքում փաստաբանի պայուսակում առկա թղթապանակից հայտնաբերվել են կպչուն ժապավենով թղթի մեջ թաքցված թվով երկու բջջային հեռախոսներ՝ բաժանորդային քարտերով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբանը, որպես արդարադատության իրականացմանը նպաստող և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կարևոր առաքելություն իրականացնող մասնագիտության ներկայացուցիչ, ունի հասարակության կողմից իրեն վերապահված հատուկ վստահություն և կարգավիճակ: Այդ հանգամանքը փաստաբանի նկատմամբ սահմանում է վարքագծի առավել բարձր մասնագիտական և բարեվարքության չափանիշներ:

Փաստաբանի գործունեությունն իր բնույթով ուղղված է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ուստի փաստաբանն իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս պարտավոր է դրսևորել իրավաչափ և բարեխիղճ վարքագիծ՝ խստորեն պահպանելով օրենքի և համապատասխան հաստատություններում գործող կարգապահական ու ռեժիմային պահանջները:

Այս համատեքստում հանձնաժողովը գտնում է, որ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս փաստաբանը, հաշվի առնելով իր հատուկ մասնագիտական կարգավիճակը և իրավապաշտպան առաքելությունը, պարտավոր էր ցուցաբերել առավել բարձր զգուշավորություն և պատասխանատվություն՝ բացառելու համար քրեակատարողական հիմնարկ արգելված առարկաների ներկրման որևէ հնարավորություն:

Հանձնաժողովն արձանագրում է, որ բջջային հեռախոսները հանդիսանում են քրեակատարողական հիմնարկում արգելված առարկաներ, իսկ քրեակատարողական հիմնարկի տարածք մուտք գործող անձինք պարտավոր են պահպանել տվյալ հիմնարկում գործող ներքին կանոնակարգով սահմանված կարգն ու պահանջները: Վարույթի նյութերից երևում է, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանը նախապես տեղեկացվել է քրեակատարողական հիմնարկ արգելված առարկաներ չներմուծելու պահանջի մասին և համապատասխան մատյանում իր ստորագրությամբ հաստատել է, որ իր մոտ նման առարկաներ առկա չեն:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ փաստաբան Արամ Հովհաննիսյանն իր ներկայացրած բացատրությամբ նշել է, որ նշված բջջային հեռախոսներն իր մոտ են մնացել մոռացության հետևանքով և ընդունել է իր վարքագծի անթույլատրելիությունը: Միևնույն ժամանակ հանձնաժողովը գտնում է, որ նշված հանգամանքը չի կարող բացառել փաստաբանի պարտականությունը՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս պահպանելու սահմանված կարգը և ձեռնպահ մնալու արգելված առարկաներ ներմուծելուց:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ փաստաբանը, հանդիսանալով

իրավաբանական մասնագիտություն իրականացնող անձ և ունենալով հատուկ մասնագիտական կարգավիճակ, պարտավոր է իր մասնագիտական գործունեությունն իրականացնել բարձր մասնագիտական և բարեվարքության չափանիշներին համապատասխան՝ ցուցաբերելով առավել բարձր զգուշավորություն և իրավաչափ վարքագիծ, այդ թվում՝ պետական մարմիններում և քրեակատարողական հիմնարկներում գործող հատուկ ռեժիմային պահանջների պահպանման հարցում:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.2.1 ենթակետի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է

փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Վերոգրյալի համակցված գնահատմամբ Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառվող կարգապահական տույժը պետք է լինի համաչափ՝ մի կողմից արձանագրելով խախտման լրջությունը և ապահովելով կանխարգելիչ ազդեցություն,

մյուս կողմից՝ հնարավորություն տալով փաստաբանին վերանայել իր վարքագիծը և հետագայում բացառել նմանատիպ խախտումները:

Մեղքի աստիճանը

Հանձնաժողովը հաշվի է առնում, որ փաստաբանը, նախապես տեղեկացված լինելով քրեակատարողական հիմնարկ արգելված առարկաներ չներմուծելու պահանջի մասին և իր ստորագրությամբ հավաստելով նման առարկաների բացակայությունը, պարտավոր էր ցուցաբերել առավել բարձր աստիճանի ուշադրություն և վերահսկողություն իր մոտ գտնվող իրերի նկատմամբ:

Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում, հաշվի առնելով փաստաբանի մասնագիտական կարգավիճակը և նրա նկատմամբ կիրառվող բարձր չափանիշները փաստաբանը կարող էր և պարտավոր էր կանխատեսել իր վարքագծի հնարավոր հետևանքները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանք բացառելու համար:

Կարգապահական խախտման հետևանքները

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, քրեակատարողական հիմնարկ արգելված առարկաների ներկրման փորձը, անկախ դրա դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարված լինելու հանգամանքից, հանդիսանում է այնպիսի խախտում, որը կարող է վտանգել քրեակատարողական հիմնարկի բնականոն գործունեությունը, ինչպես նաև խաթարել արդարադատության իրականացմանը նպաստող գործընթացների նկատմամբ վստահությունը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայության փաստն, ինչպես նաև Փաստաբանի բացատրությունները, որոնցից չի կիրառում ավելի խիստ տույժի տեսակ, որը ելնելով սույն գործով Փաստաբանին վերագրվող վարքագծի և հաստատված փաստերի համատեքստում, կարող էր կիրառվել ավելի խիստ տույժի տեսակ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նշանակությունը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արամ Ռուդոլֆի Հովհաննիսյանի (արտոնագիր՝ թիվ 564) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 6.2.1 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25087-2-Ա
25 փետրվարի 2026թ.
ք. Երևան